

**ՈՒՂԵՑՈՒՅՑ**  
**դեղամիջոցի բժշկական կիրառման վերաբերյալ**

**ՄԱԳՆԵՐՈՏ®**

Այս դեղամիջոցն ընդունելուց առաջ ուշադիր կարդացեք սույն ուղեցույցը:

Այս դեղամիջոցը բաց է թողնվում առանց դեղատոմսի: Օպտիմալ արդյունքի հասնելու համար այն պետք է օգտագործել՝ խստորեն կատարելով ուղեցույցում շարադրված բոլոր կետերը:

- Պահեք այս ուղեցույցը, այն կարող է կրկին պետք գալ:
- Եթե Ձեզ մոտ հարցեր են առաջացել, դիմեք Ձեր բժշկին:
- Դիմեք բժշկին, եթե Ձեր վիճակը վատթարացել է կամ բուժման կուրսից հետո բարելավում չի եղել:

**Գրանցման համար՝ N 17669**

**Դեղամիջոցի առևտրային անվանումը՝ Մագներոտ®**

**ՄՉԱ կամ խմբային անվանումը՝ մագնեզիումի օրոտատ**

**Դեղաձևը՝ Դեղահաբեր**

**Բաղադրությունը**

1 դեղահաբը պարունակում է՝

ակտիվ նյութ՝ մագնեզիումի օրոտատ դիհիդրատ 500 մգ,  
օժանդակ նյութեր՝ կոլոիդային սիլիցիումի երկօքսիդ՝ 2,50 մգ, նատրիումի կարմելոզ՝ 10,00 մգ, միկրոբյուրեղային թաղանթանյութ՝ 67,50 մգ, եզիպտացորենի օսլա՝ 22,50 մգ, պոլիդոն K-30՝ 30,00 մգ, մոնոհիդրատ լակտոզներ՝ 50,00 մգ, նատրիումի ցիկլամատ՝ 1,50 մգ, տալկ՝ 18,75 մգ, մագնեզիումի ստեարատ՝ 1,63 մգ:

**Նկարագրությունը**

Մպիտակ կամ համարյա սպիտակ կլոր հարթ դեղահաբեր՝ երկու կողմերում փորվածքներով և նշանով մի կողմի վրա:

**Տարմակոթերապևտիկ խումբը**

մագնեզիումի դեղամիջոց:

**Կոդ ATX՝ A12CC09**

## **Տարմակոլոգիական ազդեցությունը**

### **Տարմակոդինամիկան**

Մազնեզիումի դեղամիջոց: Մազնեզիումը համարվում է շատ էներգետիկ գործընթացների ապահովման համար անհրաժեշտ միկրոտարր, մասնակցում է սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի և նուկլեինաթթուների փոխանակության մեջ: Մազնեզիումը մասնակցում է նյարդա-մկանային դրդման գործընթացում՝ ճնշելով նյարդամկանային փոխանցումը: Մազնեզիումն առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում որպես կալցիումի բնական ֆիզիոլոգիական անտագոնիստ: Մազնեզիումը վերահսկում է սրտամկանի բջիջների նորմալ գործունեությունը, մասնակցում է սրտամկանի կծկողական գործառույթի կարգավորման մեջ: Սթրեսային իրավիճակներում արտազատվում է ազատ իոնացված մազնեզիումի բարձր քանակություն, ինչի հետ կապված մազնեզիումի լրացուցիչ քանակությունը նպաստում է սթրեսի նկատմամբ դիմադրողականության բարձրացմանը:

Մազնեզիումի դեֆիցիտը բերում է նյարդամկանային խանգարումների (շարժողական և զգցողական բարձր դրդողանության, ցնցումների, պարեսթեզիաների), հոգեբանական փոփոխությունների (ընկճախտային վիճակի, գիտակցության խանգարումների և հալուցինացիաների), սիրտ անոթային հիվանդությունների (փորոքային էքստրասիստոլայի, տախիկարդիայի, սրտային գլխկոզիդների նկատմամբ բարձր զգայունության): Հղիության շրջանում մազնեզիումի դեֆիցիտը մեծացնում է տոքսիկոզի և վաղաժամ ծննդաբերության հավանականությունը: Օրոտաթթվի աղերը մասնակցում են նյութափոխանակության գործընթացին: Բացի դրանից օրոտաթթվի աղերն անհրաժեշտ են բջջում ԱԵՖ-ի վրա մազնեզիումի ֆիքսացիայի և նրա գործունեության դրսևորման համար:

### **Տարմակոլինետիկա**

Ներծծվում է ընդունած չափաբաժնի մոտավորապես 35 - 40 % - ը: Հիպոմազնեմիան խթանում է մազնեզիումի իոնների ներծծումը: Օրոտաթթվի աղերի առկայությունը նպաստում է մազնեզիումի ներծծմանը: Մազնեզիումը դուրս է բերվում երիկամներով, դուրս բերումը փոքրանում է մազնեզիումի պակասի ժամանակ և մեծանում է նրա ավելցուկի ժամանակ:

### **Օգտագործման ցուցումներ**

#### **Մազնեզիումի դեֆիցիտ**

#### **Հակացուցումներ**

Դեղամիջոցի բաղադրիչների նկատմամբ գերզգայունություն, միզաքարային հիվանդություն, երիկամային ֆունկցիայի խանգարումներ, կալցիումա – մագնեզիումա – ամոնիակա – ֆոսֆատային քարերի առաջացման նախատրամադրվածություն, լյարդի ցիրոզ ասցիտով:

Դեղամիջոցը պարունակում է լակտոզ, ուստի լակտոզի նկատմամբ անտանելիությունով, լակտոզի դեֆիցիտով կամ գլյուկոզա – գալակտոզային մալաբսորբոցիայով հիվանդներին պետք չէ այն ընդունել:

Մանկական տարիք՝ մինչև 18 տարեկան:

### **Ընդունումը հղիության ժամանակ և լակտացիայի շրջանում**

Ըստ ցուցումների հնարավոր է կիրառումը հղիության ժամանակ և լակտացիայի (կրծքով կերակրման) շրջանում, քանի որ այդ շրջաններում մագնեզիումի նկատմամբ պահանջը զգալիորեն մեծանում է: Եթե նրա պարունակությունը հավասարակշռված չէ, ապա դա կարող է բերել լուրջ բարդությունների, այդ թվում՝ հղիության վաղաժամ ընդհատման:

Դեղամիջոցի ընդունումը հղիության ժամանակ և լակտացիայի շրջանում հնարավոր է, եթե մոր համար պոտենցյալ օգուտը գերազանցում է պտղի և երեխայի համար պիտոտենցյալ ռիսկին:

### **Ընդունման եղանակը և չափաբաժինները**

Դեղահաբերը պետք է ընդունել սնունդ ենդունելուց առաջ, ոչ մեծ քանակությամբ հեղուկով: Նշանակում են օրը 3 անգամ 2-ական դեղահաբ՝ 7 օրվա ընթացքում, այնուհետև՝ ամեն օր 1-ական դեղահաբ օրը 2-3 անգամ: Կուրսի տևողությունը՝ 4-6 շաբաթից ոչ պակաս: Անհրաժեշտության դեպքում Մագներոտ®-ը կարելի է ընդունել երկարատև:

Ձկնամկանների գիշերային ջղաձգումների ժամանակ խորհուրդ է տրվում երեկոյան ընդունել 2-3 դեղահաբ:

### **Կողմնակի ազդեցությունները**

Աղեստամոքսային տրակտի կողմից՝ անկանոն դեֆեկացիա և փարլուծություն, որոնք սովորաբար դեղամիջոցի չափաբաժինը փոքրացնելիս անցնում են, ալերգիկ ռեակցիաներ:

- Եթե ուղեցույցում նշված կողմնակի ազդեցություններից ցանկացածը բարդանում է, կամ Դուք նկատել եք ուղեցույցում չնշված ցանկացած այլ կողմնակի ազդեցություն, **հայտնեք այդ մասին բժշկին:**

### **Գերդոզավորում**

Երիկամների նորմալ գործելու դեպքում մազնեզիումի ներս ընդունումը տոքսիկ ռեակցիաներ չի առաջացնում: Մազնեզիումով թունավորումը կարող է զարգանալ երիկամային անբավարարության դեպքում: Տոքսիկ ազդեցությունները հիմնականում կախված են արյան շիճուկի մեջ մազնեզիումի կոնցենտրացիայից: Ախտանշաններն են՝ զարկերակային ճնշման իջեցումը, սրտխառնոցը, փսխումը, ընկճախտը, ռեֆլեքսների դանդաղումը, շնչառության ընկճումը, կոման, սրտի կանգը, անուրիկ համախտանիշը:

### **Փոխազդեցությունն այլ դեղամիջոցների հետ**

Մազնեզիում պարունակող դեղամիջոցների ընդունումը միաժամանակ երկաթի, նատրիումի քլորիդի դեղամիջոցների և տետրացիկլինների հետ իջեցնում է վերջիններիս աբսորբցիան: Այդ պատճառով դեղամիջոցները պետք է ընդունել 2-3 ժամվա ընդմիջումով: Պերորալ հակաբեղմնավորիչները, դիուրետիկները, միոռելաքսանտները, գլյուկոկորտիկոստերոիդները, ինսուլինը իջեցնում են դեղամիջոցի արդյունավետությունը:

### **Հատուկ ցուցումներ**

#### **Ազդեցությունը մեքենա վարելու և մեխանիզմներից օգտվելու ունակության վրա**

Դեղամիջոցը չի ազդում մեքենա վարելու և ուշադրության բարձր կենտրոնացիա կամ հոգեշարժողական ռեակցիաների արագություն պահանջող ունակության վրա:

Մազներոտ®-ը կարելի է ընդունել երկարատև:

Պետք է հաշվի առնել, որ օրգանիզմում մազնեզիումի դեֆիցիտին կարող են հանգեցնել աղեստամոքսային տրակտի հիվանդությունները, մազնեզիումի ցածր պարունակությամբ սննդամթերքների օգտագործումը, սպորտով պարապելը (բարձր քրտնարտադրության պատճառով), խրոնիկ ակոնոլիզմը (երիկամային խողովակներում մազնեզիումի ռեզորբացիայի փոքրացման և օրգանիզմից մազնեզիումի իոնների դուրս բերման ուժեղացման պատճառով), որոշ դեղամիջոցների ընդունումը (սրտային գլիկոզիդներ, ամինոգլիկոզիդային հակաբիոտիկներ, պերորալ հակաբեղմնավորիչներ, դիուրետիկներ, լուծողականներ, գլյուկոկորտիկոստերոիդներ), մազնեզիումի բարձր օգտագործում պահանջող վիճակները (հիպոդիմանիա, սթրես, հղիություն և լակտացիա), արևի տակ երկարատև գտնվելը:

### **Թողարկման ձևը**

Դեղահաբեր 500մգ: 10-ական դեղահաբ ՊՎՔ/ՊՎԴՔ թաղանթից և այլումինե թիթեղից բլիստերում: 2 կամ 5-ական բլիստեր օգտագործման ուղեցույցի հետ միասին ստվարաթղթե տուփում:

### **Պահպանման պայմանները**

25°C –ից ոչ բարձր ջերմաստիճանում:

Պահել երեխաների համար անհասանելի տեղերում:

### **Պահմանման ժամկետը**

5 տարի:

Չօգտագործել պիտանելիության ժամկետը լրանալուց հետո:

### **Բաց թողնման պայմանները**

Առանց դեղատոմսի:

### **Գրանցման հավաստագրի սեփականատերը.**

Վյորվագ Ֆարմա ԳՄԲՀն Բո. ԿԳ,

Կալվեր շտրասե 7, 70134 Բյորլինգեն, Գերմանիա

### **Արտադրող**

Մաուերմանն - Արցնայմիտտել ԿԳ,

Հայնրիխ-Կնոտտե-Շտրասսե 2, Դ-82343 Պյոկինգ, Գերմանիա

Սանկտ Սեբաստիան Շտրասսե 13, 82342, Աշերինգ, Գերմանիա (փաթեթավորում)